ՊԱՏՎԵՐ

Վանա բանտի խորքից ելած հառաչանք,
Ճիչ, աղաղակ բռնաբարված աղջկա,
Թալանվածի լաց ու աղերս, աղաչանք
Թե որ լսեք, ասացեք թե՝ բան չըկա։

Ամբողջ տարին արյուն-քրտինք աշխատող
Հայ գյուղացին թե որ լինի սովամեռ,
Կամ հուսահատ տանից կորչի հողից հող,
Գրեցեք թե՝ սաստիկ ցուրտ էր այս ձմեռ։

Թե կրակված հայոց գյուղի բոցերում
Վա՛յ կանչելով մարդիկ այրվեն կենդանի,
Հավատացրեք – խաղաղություն է տիրում,
Ժողովուրդը կյանքն օրհնում է սուլթանի։

Բան է, թե որ (չի պատահիլ այդ իսկի)
Նահատակված հային մի բան տանք, ասեն,
Դուք հասկացրեք, իբրև ծանոթ այդ ազգի,
Որ ժամը չէ, հայերը դեռ տըհաս են։

Հայոց լեզուն Մեսրոպն իրան հետ տարավ,
Իսկ կրոնը մի աղանդ է զենդական...
Սպասեցեք, մինչև որ մեր սրտացավ
Խնամքի տակ լուսավորվեն, առաջ գան։